



ԽՈՐԱՑՐԵՔ ԶԵՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ

Ռադիոածխածնային մեթոդով որոշվել է նաև Լյուդովիկոս IX-ի թիկնոցի և 200 ականների թվագրված եգիպտական մումիան ծածկող գործվածքի տարիքը: Երկու դեպքերում էլ թվագրումը համընկել է պատմականորեն ներկայացված տարեթվերի հետ:

Ռադիոածխածնային մեթոդից զատ կիրառություն են գրել մի քանի այլ ռադիոիզոտոպային թվագրման մեթոդներ ևս: Դրանցից են օրինակ կալիում-արգոնային և ուրան-թորիումային մեթոդները: Առաջին դեպքում ռադիոակտիվ կալիում-40-ը վերածվում է արգոն իներտ գազի, երկրորդ դեպքում ուրանի տրոհման արդյունքում առաջանում է թորիում քիմիական նյութը: Ռադիոակտիվ կալիումի կիսատրոհման պարբերությունը 1,25 միլիարդ տարի է: Բնականաբար այն հնարավորություն է տալիս ընդարձակել թվագրման սահմանները: Մասնավորապես գնահատվել է Պոմպեյում Վեզով լեռան հրաբխի ժայթքման ժամանակը: Այն պատմական փվյալներով հայտնի է, որ տեղի է ունեցել 79 թվականին: Ռադիոչափումները հաստատում են այս թվագրումը:

Ուրան-թորիումային մեթոդով 2021 թ. որոշվել է Ինդոնեզիայի Սուլավես կղզում մի քարանձավի պատին հայտնաբերված կենդանու նկարի տարիքը: Կենդանին Սուլավեսի կղզում ներկայումս էլ բնակվող Յելեբեսյան խոզն է (նկ.): Գնահատումը ցույց է տվել, որ կենդանու նկարը սրեղծվել է շուրջ 45.000 տարի առաջ:

Չտիվել է նաև Արարատ լեռան սառույցներում հայտնաբերված փայտանյութերի տարիքը, որոնք երկար ժամանակ ներկայացվում էին որպես Նոյյան տապանի մնացորդներ: Ըստ Աստվածաշնչի՝ դրանք պիտի ունենային առնվազն 5000 տարվա պատմություն, քանի որ պնդվում է, որ մարդկության ոչնչացումը ջրհեղեղով տեղի է ունեցել այդ ժամանակաշրջանում: Ռադիոիզոտոպների մեթոդով թվագրումը, սակայն, ցույց է տվել միանգամայն այլ փվյալներ. Նոյյան տապանի մնացորդ կոչված փայտանյութն ընդամենը 1200-1400 տարեկան է:



Նկ. Սուլավես կղզու մի քարանձավի պատին հայտնաբերված Յելեբեսյան խոզի նկարը: Նկարն ունի 45.000 տարվա հնություն: